

ԿԱՐԾԻՔ

Հասմիկ Թաթուլի Բիշարյանի <<Բառապաշարային փոխներթափանցման հաղթահարումն աշակերտների անզլերեն հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում>> ԺԳ.00.02 – դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անզլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Դիտարկվող ատենախոսության հիմնախնդիրն անառարկելիորեն արդիական է, քանի որ ժամանակակից կրթության առջև դրված է նաև օտար լեզուների իմացության պահանջ, որը միանգամայն հիմնավոր է և արդարացված: Օտար լեզվի դասավանդման որակը բարձրացնելու, այն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ուսումնամեթոդական մեխանիզմները պահանջում են շարունակական բարեփոխումներ՝ արդի կրթական պահանջներին զուգընթաց: Ուստի, այս ուղղությամբ իրականացված հետազոտությունները և կատարված դիտարկումները կարելի է գնահատել որպես ևս մեկ քայլ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի բարելավման ուղղությամբ:

Ատենախոսության ներածական մասում ատենախոսը հիմնավորում է հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, ձևակերպում հետազոտության գիտական վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանության հիմնական դրույթները:

Ատենախոսն ուսումնասիրել է թեզի հիմնախնդիրն առնչվող արդիական գրականություն, որը նպաստել է նրա կողմից դիտարկվող խնդիրների նորարարական մոտեցումներով լուսաբանմանը և գիտամեթոդական որոշումների կայացմանը:

Ատենախոսության առաջին՝ «Լեզվական փոխներթափանցումը, դրա տեսակները և հաղթահարման տեսական հիմունքներն անզլերենի, որպես օտար լեզվի, ուսուցման գործընթացում» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Լեզվական փոխներթափանցումը և դրա դասակարգման տարբերակները» ենթագլխում ատենախոսի կողմից քննության է առնվել լեզվական փոխներթափանցումը և դրա դերն օտար լեզվի ուսուցման գործընթացում: Սահմանվել է «լեզվական փոխներթափանցում» եզրույթը և դասակարգվել են դրա հիմնական տարբերակները:

Երկրորդ՝ «Օտար լեզուների յուրացման գործընթացում լեզվական փոխներթափանցումը կանխարգելելու հիմնական մոտեցումները» ենթագլխում ատենախոսը քննության է առնում լեզվական փոխներթափանցման առաջացման պատճառները և դիտարկում դրանց կանխարգելման և հաղթահարման առանձնահատկությունները:

Երրորդ՝ «Բառապաշարային փոխներթափանցումը և դրա տեսակները» ենթագլխում ատենախոսի կողմից սահմանվում է «փոխներթափանցող բառապաշար» հասկացությունը և դասակարգվում են դրա տեսակները՝ ըստ լեզվական միավորների բնորոշ առանձնահատկությունների, ըստ խոսքի մասերի պատկանելիության և ըստ առաջացման բնույթի և ուղղության:

Ատենախոսության երկրորդ՝ «Հաղորդակցական անզլերենի ուսուցման գործընթացում բառապաշարային փոխներթափանցման հաղթահարման մեթոդական համակարգը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «Աշակերտների հայտորոշիչ թեստավորում, փոխներթափանցող բառապաշարային միավորների իմացության ստուգում» ենթագլխում ատենախոսի կողմից ներկայացվում են լեզուների համադրական և սխալների վերլուծության տեսությունների օգտագործման միջոցով ՀՀ հանրակրթական դպրոցի 5-ից 8-րդ դասարանների անզլերեն առարկայական և A1, A2, B1, B1+ և B2 մակարդակի ժամանակակից դասագրքերից դուրս բերված փոխներթափանցող բառանյութը և դրանով կազմված հայտորոշիչ թեստերը, ինչպես նաև դրանց արդյունքների վերլուծությունը:

Երկրորդ՝ «Փոխներթափանցող բառապաշարի ուսուցումը հաղորդակցական առաջադրանքների համատեքստում» ենթագլխում ատենախոսի կողմից ներկայացվում է ատենախոսության շրջանակում մշակված և կիրառված եռափուլ մեթոդական համակարգ, որը ներառում է սովորողների հաղորդակցական կարողությունները զարգացնող ընկալողական և վերարտադրողական վարժություններ և առաջադրանքներ:

Երրորդ՝ «Նախագծային մեթոդի կիրառումը փոխներթափանցող բառերի ուսուցման գործընթացում» ենթագլխում ատենախոսի կողմից քննության են առնվել նախագծային մեթոդի արդիականության և արդյունավետության գործոններ, դրանց կիրառման արդյունքում սովորողների ձեռք բերած կարողությունները և հմտությունները:

Չորրորդ՝ «Մշակված մեթոդական համակարգի փորձարկում, արդյունքների վերլուծություն» ենթագլխում ներկայացվում են փորձարարական ուսուցման երեք փուլերը, որոնց ընթացքում շուրջ չորս տարի շարունակ ատենախոսի կողմից մշակվել և ներդրվել է մեթոդական համակարգը:

Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել հետևյալ դիտարկումները.

1. Մեր համոզմամբ հետազոտությունն ավելի արդիական կլիներ, եթե հեղինակը փոխներթափանցող բառապաշարային միավորների օրինակներում զուգահեռներ անցկացներ ոչ միայն երկու լեզուների միջև (անգլերեն-հայերեն, բացառիկ դեպքերում նաև ռուսերեն էջ.31, 32, 33), այլև փորձ կատարեր նույն համեմատականներն անցկացնել այլ լեզուների միջև (ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն և այլն) նույնպես:
2. Մեծ քանակությամբ քանակական տվյալների առկայությամբ պայմանավորված, աշխատանքը միայն կշահեր, եթե ձեռք բերված տվյալները ենթարկվեին SPSS վիճակագրական փաթեթի միջոցով վերլուծությանը:
3. Գիտափորձի անցկացման ընթացքը նկարագրելիս ատենախոսը նշում է. «նախագծային աշխատանքն իրականացնելուն զուգահեռ աշակերտների հետ կատարել ենք նաև հաղորդակցական վարժություններ» (էջ 92-93): Կարծում ենք, այս հատվածում ցանկալի կլիներ ճշգրտել, թե փորձարարական խմբերում մշակված հաղորդակցական վարժությունների որ տեսակն են աշակերտները կատարել (ընկալողական թե վերարտադրողական), նշված տեսակներից որոնք են գերակշռել, եղել է վարժությունների սահմանված քանակ, թե ոչ:
4. Աշխատանքում առկա են որոշ տեխնիկական վրիպակներ և անճշտություններ:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ Հասմիկ Թաթուլի Բիշարյանի «Բառապաշարայի փոխներթափանցման հաղթահարումն աշակերտների անգլերեն հաղորդակցական

կարողությունների ձևավորման գործընթացում» թեմայով ատենախոսությունն ամբողջական, լեզվական և գիտական բարձր մակարդակով իրականացված հետազոտություն է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի /ԺԳ.00.02 թվանիշով/ գիտական աստիճանին ներկայացվող ժամանակակից պահանջները և միջնորդում ենք Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում գործող ԲԿԳԿ-ի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առջև նրա հեղինակին շնորհելու իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս,

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ



Տ.Գ.Գևորգյան

Տ.Գ.Գևորգյանի ամսագրությունը

Հաստատում էմ

ՀՊՄՀ-ի գիտ. քարտուղար



Մ. Իսպիրյան

14.03.2024թ.